ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մասիս քաղաքի N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի դասվարի (2 մասնագետ 13 և 16 դասաժամ), երաժշտության (15 դասաժամ), ֆիզիկայի (10 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), ֆիզկուլտուրայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)*
- *անձը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրությունը (Ձև 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,*
- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի մարտի 6-ից մինչև մարտի 20-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի մարտի 25-ին ժամը 15^{00}–ին, ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի N 4 հիմնական դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ, քաղաք Մասիս, 7-րդ փողոց թիվ 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-73-65-43 հեռախոսահամարով: